

ԱՂՕԹՔ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻԷՆ

Կենդանի Աստուծոյ Որդի, օրհնեալ՝ ամէն բանի մէջ, դուն՝ ահաւոր Հօրը անքննելի ծնունդ: Քեզի համար անկարելի բան չկայ:

Երբ քու փառաւոր ներկայութեանդ անասուեր նշոյլները ծագին՝ մեղքերը կը հալին, դեւերը կը հալածուին, յանցանքները կը ջնջուին, կապանքները կը խզուին, շղթաները կը փշուրուին, մահացածները նոր ծնունդով կը կենդանանան, հարուածները կը բժշկուին, վէրքերը կ'առողջանան, ապականոթիւնը կը վերանայ, տխրութիւնը տեղի կու տայ, հեծութիւնը կը նահանջէ, խաւարը կը փախչի, մշուշը կը մեկնի, մառախուղը կը հեռանայ, մռայլը կը փարատի, աղջամուղջը կը սպառի, մուժը կը վերանայ, գիշերը կը մեկնի, տագնապը կը տարագրուի, չարիքները կը չքանան, յուսահատութիւնը կը հալածուի եւ քու ամենակարող ձեռքդ կը թագաւորէ, Ո՛վ քաւիչ բոլորին:

Դուն, որ չեկա՛ր մարդոց հոգիները կորսնցնելու, այլ՝ փրկելու, քու անսահման ներողամտութեամբդ ներէ՛ իմ անթիւ չարիքներս, որովհետեւ միայն դո՛ւն ես՝ երկինքի մէջ անճառելի եւ երկրի վրայ անքննելի, որ ներկայ ես գոյութիւն ունեցող իւրաքանչիւր տարրի մէջ եւ աշխարհի բոլոր կողմերը, դուն՝ ամէն բանի սկիզբը, ամէն բանի մէջ ներկայ, որ կատարելապէս կ'օրհնաբանուիս բարձրունքներուն մէջ: Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին, փա՛ռք Քեզի՝ յաւիտեան: Ամէն:

ԵՐԵՔՆԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Նկատի ունենալով, որ Մեծ Պահքի ընթացքին Ս. Պատարագը փակ վարագոյրի ետեւ կը մատուցուի, Երեքշաբթի գիշերներու Ս. Պատարագի մատուցումը պիտի դադարեցնենք Երեքշաբթի, 2 Մարտ 2019-էն սկսեալ:

Ս. Պատարագի մատուցումը պիտի վերսկսինք Երեքշաբթի գիշեր, 30 Ապրիլ 2019-ին, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ:

ԵՐԵՔՆԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-8:30, Պուրճ Համուտի Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» սրահին մէջ, կազմակերպութեամբ Ազգային Առաջնորդարանի Երիտասարդական Յանձնախումբին տեղի պիտի ունենայ 18-40 տարեկան երիտասարդ երիտասարդուհիներու ծանօթացման ընկերային հաւաք, ապա՝ ժամը 8:30-9:00, Աստուածաշունչի սերտողութիւն եւ հայ քրիստոնէական կեանքի հաւաքական քննարկում: Աստուածաշունչի սերտողութիւնը պիտի կատարէ Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս: Առաջին հաւաք եւ սերտողութիւն՝ Երեքշաբթի, 22 Յունուար 2019-ին:

Կը հրաւիրենք հայ երիտասարդութիւնը հայ եկեղեցւոյ հովանիին տակ համախմբուելու եւ Աստուծոյ խօսքով անելու:

ԵՐԵՔՆԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-8:30, Պուրճ Համուտի Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» սրահին մէջ տեղի պիտի ունենայ բոլոր տարիքի հայորդիներուն համար, ծանօթացման ընկերային հաւաք, ապա ժամը 8:30-9:00, Աստուածաշունչի սերտողութիւն եւ հայ քրիստոնէական կեանքի հաւաքական քննարկում:

Աստուածաշունչի սերտողութիւնը պիտի կատարէ Արժ. Տ. Ղեւոնդ Քհն. Լօշ-խաճեան: Առաջին հաւաք եւ սերտողութիւն՝ Երեքշաբթի, 5 Մարտ 2019-ին: Կը հրաւիրենք հայ ժողովուրդի գաւակները Աստուծոյ խօսքով անելու:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 - facebook-ի էջ jerak ճրագ քերթ



ՔՈՒ ԽՕՍԲԴ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԾՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԾԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԲ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 17 ՄԱՐՏ 2019 ԹԻՒ 11

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ Ես. 54.11-55.13: Բ.Կր.6.1-7.1: ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ 15.1-32

Գ. Քառասնորդաց: ԱՆԱՌԱԿԻ

Մարդ մը երկու գաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ. «Հա՛յր, քու ստացուածքէդ ինծի ինկող բաժինը հիմա տուր ինծի»: Եւ հայրը իր գաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք կրտսեր գաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

Պատահեցաւ, որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անիկա իր ազարակը դրկեց զինք՝ խոզեր արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիւրներով իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ. «Հօրս տան մէջ քանի՛ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն. - Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ, այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու: Զիս նկատէ՛ քու գործաւորներէդ մէկը»: Ապա ելաւ եւ հօրը քով գնաց: Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գնաց վազելով դիմաւորեց զայն, վզին փաթթուեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ. «Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու»: Հայրը իր ծառաներուն հրամայեց. «Անմիջապէս բերէ՛ք լաւագոյն պատմուճանը եւ հագցուցէ՛ք իրեն: Մատանի անցուցէ՛ք իր մատին եւ կօշիկ տուէ՛ք իրեն: Բերէ՛ք պարարտ հորթը, մորթեցէ՛ք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս գաւակս մեռած էր եւ ողջեցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»: Եւ սկսան խրախճանքի:

Մինչ այդ, երէց գաւակը ազարակ կը գտնուէր: Վերադարձին, երբ տան մօտեցաւ՝ երգի ու պարի ձայներ լսեց: Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց թէ ի՞նչ կայ: Ծառան ըսաւ իրեն. «Եղբայրդ եկաւ. եւ որովհետեւ ողջ-առողջ վերադարձաւ, հայրդ պարարտ հորթը մորթեց»: Երէց գաւակը գայրացաւ եւ չուզեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց, որ ներս մտնէ:

Իսկ ան պատասխանեց. «Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ, որեւէ մէկ հրահանգդ չանտեսեցի, եւ սակայն նոյնիսկ ուլ մը չտուիր ինծի, որ ուրախանայի բարեկամներուս հետ: Մինչդեռ, երբ քու այդ որդիդ եկաւ, որ քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսխեց, պարարտ հորթը մորթեցիր անոր համար»:

Հայրը ըսաւ. «Տղաս՛, դուն միշտ ինծի հետ ես եւ ամբողջ ունեցածս քուկդ է: Սակայն հիմա պէտք է ուրախանանք եւ ցնծանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջեցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»:

**ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՆԱՄԱԿՆԵՐ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ
54.11- 55.13**

Տէրը այսպէս կ'ըսէ. «Ո՛րկ երուսաղէմ, փոթորիկէն զարնուած անմիօթար տառապեալ, հաշտութիւն պիտի ընեմ հետդ, որպէսզի միօթարուիս. ահա ես էու հիմերդ շափիւղայ քարերով պիտի դնեմ, պատերդ՝ կարկեհան քարերով, աշտարակներդ կարմիր յակիւնքներով պիտի կանգնեմ, դռներդ՝ բիրեղէ, եւ շուրջդ պարիսպ պիտի քաշեմ ընտիր եւ թանկագին քարերով:

Բոլոր որդիներդ Աստուծմէ ուսած պիտի ըլլան, գաւակներդ մնայուն խաղաղութիւն պիտի վայելեն, եւ դուն արդարութեան մէջ պիտի հաստատուիս: Այ բռնութեան վախը պիտի չունենաս, արհաւիրքը քեզի պիտի չմօտենայ: Քեզի եկողները պիտի ըլլան միայն անոնք՝ որոնք ինձով դարձի կու գան: Իրենց երկիրները ձգելով պիտի գան էու կողքիդ բնակին, քեզ իրենց ապաստանը դարձնելով:

Ահա ես ինքս քեզ հաստատեցի: Դարբինը իր փոքրով կրակը կ'արծարծէ եւ կը շինէ գործիքներ, որոնք գործածութեամբ կը մաշին ու կը փնանան. սակայն ես քեզ հաստատեցի որ միշտ մնաս:

Որեւէ զէնք պիտի չյաջողի քեզի վնասել: Որեւէ լեզու, որ կը փորձէ քեզ դատապարտել՝ պարտութեան պիտի մատնես, եւ քեզ ամբաստանողները իրենք պիտի դատապարտուին: Տիրոջ ծառայողներուն ծառանգութիւնը այս է. ես է որ զանոնք կ'արդարացնեմ,՝ կ'ըսէ Տէրը: Դուք որ ծարաւ էք՝ ջուրին եկէ՛ք, եւ դուք որ դրամ չունիք՝ եկէ՛ք գինի ու կաթ առէ՛ք առանց դրամի, առանց գին վճարելու:

Ինչո՞ւ ձեր դրամը կը վատնէք հացէն տարբեր բանի համար. ինչո՞ւ ձեր վաստակը կու տաք այնպիսի բաներու, որոնք չեն կշտացներ: Ինձի մտիկ ըրէ՛ք եւ բարիք պիտի վայելէ՛ք, բարիքներով պիտի կշտանաք:


**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ
ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ
6.1 - 7.1**

Արդ, որովհետեւ Աստուծոյ գործակիցներն ենք, կ'աղաչենք ձեզի, մի՛ վատնէք Աստուծմէ ձեր ստացած շնորհքը: Որովհետեւ Աստուծոյ կ'ըսէ. «Երբ յարմար ժամանակը եկաւ՝ լսեցի քեզ, երբ փրկութեան օրը հասաւ՝ օգնեցի քեզի»: Ահա հիմա՛ է այդ յարմար ժամանակը: Հիմա է փրկութեան օրը:

Որեւէ բանով պատճառ մի՛ ըլլաք, որ Աստուծոյ գործը խափանուի կամ վարկաբեկուի, այլ՝ բոլոր պարագաներուն ալ դուք ձեզ ցոյց տուէք որպէս Աստուծոյ պաշտօնեաներ, մեծ համբերութեամբ յանձն առնելով նեղութիւնը, վիշտը, չարչարանքը, ծեծը, բանտը, խոովարարներու յարձակումները, յոգնութիւնը, անհնութիւնը, անօթութիւնը: Այս բոլորը տարբէր մաքուր սիրտով, գիտակցօրէն, համբերատարութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, նշմարտութիւնը քաղցրելով, Աստուծոյ գօրութեամբ եւ արդարութեամբ գինուած՝ չարին դէմ յարձակելու եւ ինքզինք պաշտպանելու համար: Մի՛ այլայլիք ո՛չ փառքէն եւ ո՛չ անարգանքէն, ո՛չ գովասանքէն եւ ո՛չ մեղադրանքէն: Մարդիկ մտորած թող ըսեն մեզի. մենք գիտեմք թէ նշմարտութենէն չենք շեղած: Թող չուզեն մեզ ցանցնալ. մենք գիտեմք, թէ մեզ լա՛ւ կը ցանցնան: Թող մեռած սեպեն մեզ մենք գիտեմք, թէ կենդանի ենք: Թող մեզ պատժապարտ համարեն. մենք գիտեմք թէ մահուան դատապարտութենէն ազատած ենք: Թող մեր կեանքը տխուր կարծեն. մենք միշտ ուրախ ենք: Աղքատ թող սեպեն. մենք ուրիշներու կեանքերը կը նոխացնենք: Այո՛, կը թուի թէ ոչի՛նչ ունինք, մինչ ամէն ինչ ունինք:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԿԻՐԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ



Վարդապետ եկեղեցւոյ: Ծնաւ 315-ին Երուսաղէմի մօտերը, քահանայ ձեռնադրուեցաւ 345-ին, պատրիարք ընտրուեցաւ 350-ին: Իր առաքինակրօն կեանքին եւ իմաստութեան համար սիրելի դարձած էր ուղղափառներուն եւ նոյնիսկ չարափառներուն, այսինքն՝ արիոսեանց: Բայց պատրիարքական աթոռ ելլելէ առաջ, երբ ըմբերանց այս վերջինները, անոնք հակառակութեամբ լեցուեցան իր դէմ: Այն հակառակութեան հետեւանձնովն էր որ անգամ մը գահընկեց եղաւ, եւ յետոյ նորէն դարձաւ Երուսաղէմ, Յուլիանոս Ուրացոյի ատեն, որուն հրէից Տաճարը վերաշինելու անմիտ ձեռնարկին ակնատես իսկ եղաւ: Արիոսականները յաջողեցան վերստին ձգել գինքը իր Աթոռէն, որուն վրայ վերջապէս վերահաստատեց յետոյ գինքը Կ. Պոլսոյ ժողովը: Իր օրով տեղի ունեցաւ Ս. Խաչին հրաշալի երեւումը Երուսաղէմի մէջ, որուն համար ծանուցանող նամակ մը ուղղեց Կոստանդկայսեր: Իր հոգեւոր գործունէութեան ամէնէն փայլուն եւ արդիւնաւոր կողմերէն մին եղաւ ի քրիստոնէութիւն դարձնելու բազմաթիւ հեթանոսներու, որոնք իր ձեռքէն կ'ընդունէին քրիստոնէութիւնը:

Այս առթիւ խօսած իր քարոզները, որոնք քրիստոնէական վարդապետութեան սեփական սկզբունքները կը պարունակեն, մեծ մասամբ ամփոփուած են «Կոչումն ընծայութեան» հատորին մէջ, որ ոսկեդարեան թարգմանութեամբ վերածուած է հայերէնի: Թարգմանուած է նոյնպէս Կոստանդկայսեր ուղղած իր նամակը: Իսկ աւանդութիւնը Երուսաղէմի Ս. Յակոբեանց եկեղեցիի Ս. Ստեփանոս մատրան մէջ կը ցուցնէ աւագանը, որուն մէջ Ս. Կիրեղ վկայուած էր երախայից բազմութիւն մը:

ՄԵԾ ՊԱՀՔԸ

Իբրեւ պահեցողութեան քառասնօրեայ շրջան, Մեծ Պահքին հիմքն է մեր Փրկչին 40 օրերու ծոմապահութիւնը անապատին մէջ: Եւ որովհետեւ մարդկային սովորական բնութիւնը գրեթէ անկարող է տոկալ 40 օրերու՝ ցերեկ եւ գիշեր, միանուագ պահեցողութեան, ուստի եկեղեցին տնօրինած է օրական մէկ ժամ միայն ուտելով 40 օրերու պահեցողութիւն կատարել: Ասիկա կոչուած է Մեծ Պահք, հակադրաբար միւս պահքերուն, որոնք շաբաթը հինգ կամ երկու օրեր էին: Մեծ Պահքին գլխաւոր նպատակն էր նախապատրաստել հաւատացեալը, որ Աւագ Շաբթուան ընթացքին արժանապէս մտնէր Ս. հաղորդութեան եւ աւելի մեծ ուրախութեամբ տօնէ Ս. Չատիկը: